

գործն է: P. Bassi կարծիք կը յայտեէ թէ իսլամական վարժարանի վերածուելը տեղի ունեցած է 930ին և 950ին միջև:

Բայց ի՞նչպէս ապահովուիլ թէ այս երկու թուականներու միջև նորոգութիւն մը տեղի ունեցած է. եկեղեցւոյ գաւթին խիստ մօտ գտնուած է Պրոպատիկէ իջնելու համար Սաչակիրներուն կողմէն շինուած աւելի հին կառուցուածք մը՝ որուն քարերը կը թուին ցոյց տալ՝ եթէ ոչ գործաւորները, գոնէ այն միւսնոյն քարահանքը լայն երակով, 55 սանթիմեթր բարձրութեամբ խոշոր քարեր, որ կը զարգարեն եկեղեցիին ճակատը: Այս վերջինս ալ ուրեմն ստուգիւ կը վերաբերի Սաչակիրներէ առաջ թուականի մը:

Փոքրիկ արձանագրութիւն մը երկաթի սուր ծայրով մը՝ մարդու բարձրութեամբ՝ քանդակուած մայրադրան վրայ, ուշադրութեան արժանի է: Մեր օրերուն ալ, Երուսաղէմի մէջ՝ օտար ուխտաւորներ կը սիրեն նշանակել սուրբ Տեղերու քարերուն վրայ իրենց անունը և իրենց ձամբորգութեան տարին: Այս վիմագրութիւնը (grafitto) կը պարունակէ յունական գիրեր և թիւեր: Յունական գիրերը այսպէս կը կարդացուին $\tau\omicron$ $\gamma\epsilon\upsilon\epsilon$, որ $\tau\delta$ $\gamma\epsilon\upsilon\beta\lambda\iota\sigma\tau$ բառերուն սկզբնաւորութիւնն են, և թիւերէն յետոյ կարդացուած է $\theta\eta\tau\alpha$ գիրը, և կը մեկնուի ձևունդ, իննետող աւիս: Եւ որովհետև Նիկիոյ ժողովէն ի վեր, Յոյները ընդունած էին Յուլիան տումարը, այն տարւոյն մէջ կ'սկսի քաղաքային տարին Յունվարի սկիզբը, ուստի ընդունուած է սա իմաստը, ձևունդ, սեպտեմբեր: Բայց որ թուականին, հոն գրուած է թուով՝ զոր կը կոչենք արաբական, և արաբները կը կոչեն հնդկական: Կ'ըսուի թէ մեր թիւերուն գործածութիւնը փոխ առնուած է Սպանիոյ Մաւրիտանացիներէն և Ֆրանսա բերուած է թ. գարու վերջերը նշանաւոր ժիրպէրի կողմէն՝ որ յետոյ Պապ ընտրուեցաւ Սեղբեստրոս Բ. անուամբ: Ուրիշ հեղինակներ կը հաստատեն թէ մեր արդի թիւերը բերուած են Արեւելքէն՝ ուր անոնք կը գործածուէին այս թուականէն շատ յառաջ: 250 թիւը շատ դիւրաւ պիտի կարդացուի մայրադրան վրայ: Յոյները երկար ատենէ ի վեր կը գործածէին թուական մը որ կ'սկսի Կ. Պոլսի երրորդ ժողովէն, 608ին: Թուականը ճշգորէն կը համապատասխանէ ուրեմն փրկչական 930 թուականին: P. Bassi, Ս. Երկրի հին պատմագիրը, կարծիք յայտնած է թէ եկեղեցին իսլամական վար-